ԽՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ

Ամենայն Հայոց շինարար կաթողիկոս Վազգեն Ա-ին

Որքան ուրախ կզգանք մենք զմեզ,
Երբ որ կտեսնենք այսօր մեր մեջ Քեզ.
Ով Դու սրբացյալ հայոց հայր արի,
Կողջունենք սրտանց գալուստդ բարի:

Ծերունազարդ սուրբ, անձնվեր էակ
Էությամբդ բարի, սեր ես Դու համակ.
Վսեմ գահակալ, պաշտպան հայ գահին,
Կյանքդ մեզ համար շատ է թանկագին:

Դու մեր մեծ ազգին զավակ ոսկեծին
Ու խաղաղության անքիծ աղավնին.
Ամենայն հայոց փառքը, սիրելին,
Դու ես մեզ համար նվեր երկնային:

Լույս ես մշտավառ, կյանքի կայծ անշեջ,
Հայրենիքն ամբողջ կտեսնենք Քու մեջ.
Դու երկար ապրե և կյանք տուր հային,
Ան հույժ կարոտ է Քու ջերմ խնամքին:

Ով քաջ Հայրապետ Ամենայն Հայոց,
Վազգեն Առաջին, սրբություն սրբոց.
Կմաղթե Քեզ կյանք երկար, քաջառողջ,
Աշխարհով ցրված հայությունն ամբողջ:

ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ

Մոնրեալ,
29 սեպտ. 1987 թ.

ՎԵՀԱՓԱՌՆ Է...

Վեհափա՞ռն է, ահա նորեն
Այցի կու գա աստվածակոխ սուրբ վայրերեն,
Այցի կու գա իր ցիրուցան զավակներուն,
Գորովագութ սիրտն իր, սիրո օվկիան անհուն,
Սեր մը՝ հորդուն, համապարփակ ու տարածուն...:

Վեհափա՞ռն է, կու գա նորեն,
Իր թևերը մեյ-մեկ լուսո ամպ հրեղեն...
Ժըպիտն անուշ Իր աչքերուն, ներհուն, խոհուն,
Ձայնն իր նեկտար, զերթ ջինջ, զուլալ գետ վարարուն,
Մեզ առինքնող, մեզ հըմայող ի՞նչ վեհ Անուն...:

Վեհափա՜ռն է, ահա կու գա,
Խաչն ի ձեռին, հուրն Իր սրտին, հոգեհիմա,
Սարն Արարատ, դարձած ողջույն, դարձած վեղար,
Վեհը՝ Ինքը, Արարատը մանրանիկար...
Այն ի՜նչ բարձունք, ի՜նչ պըսպըղուն, լուսեղ Կատար...:

Վեհափա՜ռը... մեր փառքն է Ան,
Լուսավորչի Լույս-Աթոռին՝ արդար, արժան,
Հայոց Հայրիկն Իրեն մենտոր, ներշընչարան...
Մեր Հայրապետ, մեր Վեհապետ, մեր Հայրիկ ջան,
Իշխան չունինք, հայոց Իշխան, հայոց Արքան...:

Վեհափա՜ռն է, Իրմով կըլլան
Մեզ երաշխիք շընքեղ ներկան ու ապագան,
Մեր սևաչվի, նազան-նոր հարս Մայր Հայաստան,
Իրմով հաստատ, Իրմով զորեղ ու անսասան,
Մայր Սուրբ Աթոռ, Մայր Հայաստան միշտ անբաժան...:

Վեհափառի երանյա՜լ Մայր,
Թե՛ պարզուկ Մայր, թե՛ Տիրամայր, թե՛ Վեհամայր...
Տըղա տիոց սահմանյալ մեծ, գանձ թանկագին,
Այն ի՜նչ զավակ պարգևեր ես հայոց ազգին,
Իմ տառապած, իմ վեհապանծ հայոց ազգին...:

Վեհափա՜ռն է, միշտ արքենի,
Վեհափա՜ռն է, պատկառելի, հույժ սիրելի,
Իր շընրթներուն՝ Սեր-Միության պատգամն ունի...
Մեր ծընկաչոք համբույրն ջերմիկ ու կաթոգին,
Մյուռոնաօծ, շընորհաբաշխ Իր սուրբ Աջին...:

Վեհափա՜ռն է, այցի կու գա,
Բարի-գալո՜ւստ, բարի-գալո՜ւստ Վեհափառին...:

ՇԱՀՆԱԶԱՐ ՔԵՈԹԱՀՅԱՆ

Գլենդել,
Օգոստ.-սեպտ. 1987 թ.